ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«11» հունիսի 2026 թվականի N 566-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԹԻՎ 22 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 5-րդ շենքի 11 բնակարանի բնակիչ Մարգարիտ Վիգենի Վարդանյանի /լիազորված անձ/ 2026 թվականի հունիսի 10-ի թիվ 2656/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավանի քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 15-ի «Չարենցավան քաղաքի մի շարք հիմնարկ-ձեռնարկությունների հանրակացարանների սեփականաշնորհման թույլտվություն տալու մասին» թիվ 22 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 24-րդ շենք 5 բնակարան) «Խանյան Արտյուշա» բառերը փոխարինել համապատասխան «Խանյան Արտուշ» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հունիսի 11
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հունիսի 2026 թվականի N 565-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Արթուր Փանոսյանի կողմից ինքնակամ կառուցված 24.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Չափշին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023DYRKHK ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 44.1 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք. *Չարենցավան Երիտասարդության փողոց 2-րդ փակուղի թիվ 2/10*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Արթուր Փանոսյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հունիսի 10
Ք. Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հունիսի 2026 թվականի N 564-Ա

ԱԼՎԱՐԴ, ԱՐԹՈՒՐ ԵՎ ԱՐՍԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Ա. Նիկողոսյանի 29.04.2026 թվականի թիվ 2120/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Ալվարդ, Արթուր և Արսեն Նիկողոսյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գյուղ Արզական Բարեկամության փողոց 2-րդ փակուղի թիվ 6 հասցեում գտնվող 0.284 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասում 2000 թվականին ինքնակամ կառուցված 200.09 քմ մակերեսով բնակելի տունը և 1 դուռն ու 2 պատուհանը՝ համաձայն «ԱՐՓԻԽԱՉ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026CYTMFC ծածկագրի:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հունիսի 10
Ք. Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«10» հունիսի 2026 թվականի N 563-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գոռ Իսրայելյան Աշոտի անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ ք. Չարենցավան Ռուսովի փողոց թիվ 3 շինության տարածքում գտնվող 176.1 քմ մակերեսով առևտրի օբյեկտում, ոգելից և ակոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N2654/12 առ 2026 թվականի հունիսի 10-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N013600 անդորրագրի դիմումատուն 2026 թվականի երրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 95-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Գոռ Իսրայելյան Աշոտի*** անհատ ձեռնարկատիրոջը 2026 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ ք. Չարենցավան Ռուսովի փողոց թիվ 3 շինության տարածքում գտնվող առևտրի օբյեկտում, իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք (Թույլտվություն N 260):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վ. Բարսամյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հունիսի 03
Ք. Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հունիսի 2026 թվականի N 562-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5/10 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Գրիգոր Սոլկարյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 01062026-07-0194 վկայական) ***ք. Չարենցավան 3-րդ թաղամաս 3-րդ փողոց թիվ 5/10*** հասցեում գտնվող 1.9 քմ մակերեսով պարիսպը և 27.4 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Գրիգոր Սոլկարյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Շինության /պարիսպ/ 1 քառակուսի մետրի համար՝ 3940 (երեք հազար ինը հարյուր քառասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Գրիգոր Սոլկարյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 8000 (ութ հազար) դրամ՝ շինության /պարիսպ/ գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 122000 (մեկ հարյուր քսաներկու հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Գրիգոր Սոլկարյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Գրիգոր Սոլկարյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ.հունիսի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«09» հունիսի 2026 թվականի N 561-Ա

ՄՈՒՇԵՂ ԱՐՏԱԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի 2026 թվականի ապրիլի 30-ի արձանագրության համաձայն՝ քաղաքացի Մուշեղ Արտակի Գասպարյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 12-րդ փողոց թիվ 45 տան մոտակայքում՝ առանց համապատասխան թույլտվության կատարել է հին գոմի պատի ուժեղացման և լրացուցիչ երեք շարք ավելացման աշխատանքներ:

Փաստի առթիվ 06. 05. 2026թ. -ին Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է համար 484-Ա որոշումը «Քաղաքացի Մուշեղ Արտակի Գասպարյանի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու և լսումների օր նշանակելու մասին»: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026թ. մայիսի 14-ին ժամը 11:00-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու պատակով համայնքապետարանը պատվիրված նամակ է ուղարկել Մուշեղ Արտակի Գասպարյանին, սակայն մինչև նիստի համար նշանակված ժամանակը վերջինս դեռ ծանուցված չի եղել և նամակը գտնվել է Բջնիի ՀայՓոստի բաժանմունքում, հետևաբար Մուշեղ Արտակի Գասպարյանը նիստին չի ներկայացել:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտման համար հանձնաժողովը նպատակահարմար է համարել Մուշեղ Արտակի Գասպարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել և հրավիրել ևս մեկ նիստ՝ վերջինիս լսելիությունն ապահովելու համար:

19.05.2026 թվականին ՀայՓոստից ետ է վերադարձել Մուշեղ Արտակի Գասպարյանին հասցեագրված ծրարը՝ ՀՀ-ից բացակայում է նշագրմամբ:

Առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 20.05.2026 թվականին համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է համար 521-Ա որոշումը՝ «Քաղաքացի Մուշեղ Արտակի Գասպարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին»: Վարույթը երկարաձգվել և լսումների օր է նշանակվել 2026 թվականի հունիսի 09-ին ժամը 12:00-ին:

Մուշեղ Արտակի Գասպարյանը պատշաճ ծանուցվել է նիստի օրվա և ժամի մասին՝ պատվիրված նամակով և Ազդարար ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված հայտարարությամբ:

Մուշեղ Արտակի Գասպարյանը չի ներկայացել վարչական լսումներին և չի ներկայացրել որևէ առարկություն՝ հարուցված վարչական վարույթի շրջանակներում:

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի 2026 թվականի ապրիլի 30-ի արձանագրության կազմման ժամանակ Մ. Գասպարյանի մայրը՝ Ռիպսիմե Գասպարյանը, հայտնել է, որ այս հարցի վերաբերյալ ՀՀ կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ներկայացվել է քաղաքացիական հայց և այն գտնվում է դատաքննության փուլում: Ռ. Գասպարյանի հայտնած տեղեկության իսկությունը Չարենցավան համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի կողմից ճշտվել է Դատալեքս դատական տեղեկատվական համակարգի միջոցով, ըստ որի ԿԴ/0730/02/21 քաղաքացիական գործով 2021 թվականի հունվարի 21-ին հայցադիմում է ներկայացվել ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և 2021 թվականի հունվարի 27-ին այն ընդունվել է վարույթ և այն դեռ գտնվում է դատաքննության փուլում:

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով Օրենսգրքի 219.[1]-րդ, 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) կետերը («Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը, բացառությամբ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող իրավահարաբերություններից բխող, այդ թվում՝ օտարվող կամ օտարված գույքի կամ դրա նկատմամբ ձեռքբերողի սեփականության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ վարչական ակտերի վերաբերյալ քննվող գործերի, բ) վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը»), ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի 2026 թվականի ապրիլի 30-ի արձանագրությունը և Չարենցավան համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի 2026 թվականի հունիսի 09-ի թիվ 06 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. **Մուշեղ Արտակի Գասպարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել՝ մինչև քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հունիսի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հունիսի 2026 թվականի N 560-Ա

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՀԱՅԿԱԶ ԵՎ ՍՈՖԻԿ ԴԱՎԹՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԿԱՐԵՆԻՍ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ և 118-րդ հոդվածներով, 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Կարենիս բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1991 թվականի հոկտեմբերի 07-ի թիվ 20 նիստի արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Հայկազ և Սոֆիկ Դավթյաններին պատկանող 570.2 քմ մակերեսով անասնաշենքի սպասարկման համար առանձնացված 0.2328 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը, նկատի ունենալով, որ հողամասը համապատասխանում է Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում :
2. Նշված հողատարածքը հասցեավորել որպես ***«Չարենցավան համայնք գյուղ Կարենիս 5-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 7»***:
3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն հատակագծի և «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2024M5HZAC ծածկագրի:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հունիսի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հունիսի 2026 թվականի N 559-Ա

ԱՐՄԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՓՈՂՈՑ 8-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 17 դեկտեմբերի 2025 թվականի <<<<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ 397-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին>> օրենքի դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք, գյուղ **Արզական Ամառանոցային թաղամաս Այգեգործական փողոց 8-րդ փակուղի թիվ 6 հասցեի 0.07158 հա** մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա, որը չի դասվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին, 1990 թվականին ինքնակամ կառուցված 236.12 քմ մակերեսով շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և, նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված **Արմինե Մարգարյանին** սեփականության իրավունքով պատկանող **0.07158** հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 1990 թվականին ինքնակամ կառուցվել է 236.12 քմ մակերեսով շինություններ՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, գյուղ **Արզական Ամառանոցային թաղամաս Այգեգործական փողոց 8-րդ փակուղի թիվ 6** հասցեի թիվ 08102025-07-0067 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով **0.07158** հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա 1990 թվականին ինքնակամ կառուցված 236.12 քմ մակերեսով շինությունները համարել օրինական՝ համաձայն «Ջի Քյու Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026CJT7ZH ծածկագրի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ.հունիսի 09
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«08» հունիսի 2026 թվականի N 558-Ա
ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 16-ին անցկացվելիք յոթերորդ նստաշրջանի թիվ 6 հերթական նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝

●***/նախագիծ 47-Ա/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 98-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

●***/նախագիծ 48-Ն/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

●***/նախագիծ 49-Ա/*** Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

●***/նախագիծ 50-Ա/*** Չարենցավան համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

1.2 Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

●***/նախագիծ 51-Ա/*** Սեփականություն իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

●***/նախագիծ 52-Ա/*** Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը վարձակալության իրավունքով «ՄՖ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ին տրամադրելու թույլտվություն տալու մասին:

●***/նախագիծ 53-Ա/*** Սեփականության իրավունքով Անդրանիկ Զալինյանին պատկանող հողատարածքի մի հատվածի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

●/*նախագիծ 54-Ա/* «Հովթեր» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող «Արգել-1 ՓՀԷԿ»-ի կառուցման և շահագործման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հունիսի 16
Ք.Չարենցավան